Թ

ՄԵՆ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ Ի ԿԱՖԱ

ԱՌ ԳԵՆՈՒԱՅԻՈՎՔ

Այժմ մեզ անտարակոյս է որ՝ այս մեծ գաղթականութենէ առաջ կային ի Կաֆա, ի Սուրղաթ, ի Սոլդայա բազմաթիւ Հայեր, իրենց վանքերով, եպիսկոպոսներով և եկեղեցիներով, որք Գենուացւոց ամակից ոչ աննշան, այլ նշանաւոր և բարեկեցիկ կեանք կը վարէին, որ և պատճառ կամ դրդիռ եղած է այս մեծ գաղթականութեան ազգիս յԱքսէրայէ դէպ ի Կաֆա։

1239 ին Զաքարէ մեծ իշխանի որդւոյն Շահնշահի պայազատութեան միջոց, որ կը տիրէր Անւոյ՝ Բագրատունեաց գեղապանծ շահաստանին, Զարմա Խանն Թաթարաց, մեծ բազմութեամբ յարձակելով քաղաքին վերայ, քիչ ժամանակամիջոցի անհնարին կոտորած կը հասցնէ քաղաքացեաց, և դարերու միջոց շինուած գեղապանծ քաղաքը աւերակաց կոյտ կը դարձընէ. այս դէպքս ազգային ականատես պատմիչք արժանապէս ողբացել են։ Կաֆայեցի յայսմաւուրքին անանուն գրիչը, ըստ օրինակի այլոց պատմագրաց, ողբալով քաղաքին կործանումը և պատճառ բերելով թէ «ոչ արդարութիւն գտանեցաւ ի մեզ...» (կը յաւելու) «Բազումք թողեալ զոսկէզօծ պալատս և զծաղ«կաւէտ դաշտս, զվանորայս և զեկեղեցիս աւեր,